

Լրատու

Թիւ 5
Հոկտեմբեր 2007

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

Սիրելի հայրենակիցներ,

Ամառուան արձակուրդներն կազդուրուած վերադառնալով, վստահ եմ, բոլորդ վերանորոգուած ու նոր թափով լծուած էք աշխատանքի:

Վերամուտի առիթով, բոլոր աշակերտներուն եւ ուսուցիչ-ուսուցչուհիներուն կը մաղթեմ յաջող կրթական տարի մը:

Երեսփոխանական գրասենեակը Օգոստոս 2007ին 15 օրուայ դադար մը ունենալով, վերսկսած է իր գործունեութեան եւ աշխատանքները կը շարունակուին բնականոն ձեւով:

Դարձեալ կը ներկայանամ «Լրատու»ի նոր թիւով մը, ձեզ հաղորդակից դարձնելու վերջին եռամսեայի կարճ, սակայն արդիւնաւետ գործունեութեան մասին:

Մեր գրասենեակին աշխատանքները մեծ մասամբ կեղրոնացան կազմակերպելու համար «Արելիկ» Սանկապատանեկան համոյթի ելոյթներուն իրականացումը, որ, ինչպէս բոլորդ գիտէք, տեղի պիտի ունենայ Շաբաթ, 6 Հոկտեմբեր 2007ին, երեկոյեան ժամը 8.00ին եւ Կիրակի, 7 Հոկտեմբեր 2007ին, կեսօրէ ետք ժամը 5.00ին, Սթրովլոսի շքեր հանդիսասրահին մէջ: Այս մեծածաւալ ձեռնարկին յաջողութիւնը կախեալ է ձեր բոլորին ներկայութենեն, քաջալերելու համար մեր հայրենի պատասի արուեստագետները:

Աւարտած են նաեւ բոլոր աշխատանքները Կիրակի, 14 Հոկտեմբեր 2007ին, կեսօրէ ետք ժամը 4.00-6.00ը, Hilton Park-ին մէջ տեղի ունենալիք Կուրօքի Կանխարգիլման ձեռնարկին գծով: Յանձնարելի է բոլոր հայ

տիկիններուն եւ օրիորդներուն ներկայութիւնը:

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 16րդ տարեդարձը մեծ շուքով նշուեցաւ Մելգոնեան Կըրթական Հաստատութեան շրջափակին մէջ, 19 Սեպտեմբեր 2007ին, որու մանրամասնութիւնները պիտի տեսնեք «Լրատու»ի 7րդ էջին մէջ:

Սեպտեմբերի մէջ, բժախնդիր աշխատանք տարուեցաւ պատրաստելու համար մանրամասն տեղեկագիր մը Կիպրահայ համայնքի մշակութային, ընկերային եւ տնտեսական հարցերու կապակցութեամբ, որ ուղղուեցաւ Եւրոպական Միութեան Խորհրդատու Մարմինի Փոքրամասնութիւններու Ազգային Դիմագիծի Պահպանութեան քարտուղարութեան:

Եւ վերջապէս, «Լրատու»ի յաջորդ էջերուն մէջ ձեզի պիտի տեղեկացնենք Բնակարանային Դիմումներու օրենքներուն եւ պայմաններուն մասին: Բոլոր անոնք, որոնք հետաքրքրուած են եւ կը փափաքին յաւելեալ տեղեկութիւն ստանալ կամ դիմում կատարել, կրնան ներկայանալ Երեսփոխանական Գրասենեակ ստանալու համար անհրաժեշտ դիմումնագիրերն ու ցուցմունքները:

Վարդգէս Սահմեսեան Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵՎԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Քաղաքացիական հարցեր եւ կեցութիւն

Քաղաքացիական հարցերու կապակցութեամբ աշխատանքները դասդադ բնոյթ արձանագրեցին անցեալ եռամսեային ընթացքին, կառավարական գրասենեակներու պաշտօնեաներու արձակուրդներուն պատճառով, սակայն կարգ մը հրատապ հարցեր բարոք լուծումի յանգեցան:

Օգոստոսի կիսուն, Պետական Ներկայացուցիչի միջամտութեամբ, մեծ դժուարութեան առջեւ գտնուող երկու անհատներ ապահովուեցան կեցութեան եւ գործի արտօնագրերով:

Մեր գրասենեակի քաղաքացիական հարցերու պատասխանատուն, երկու ամսուայ արձակուրդնեն վերադառնալով, մօտեն սկսած է աշակցիլ կեցութեան արտօնութիւններու նորոգութեան եւ քաղաքացիութեան դիմումներու աշխատանքներուն:

Հպատակութիւն

Օգոստոս 2007ի սկիզբը, շնորհիւ Պետական Ներկայացուցիչի յարատեւ ու հետեւողական ջանքերուն, Լիբանանահայ հայրենակից մը ստացաւ Կիպրական քաղաքացիութիւն:

Կրթանպաստ

Վերամուտի օրերուն, նախապէս մեզի դիմում կատարած թիւով վեց աշակերտներուն կրթանպաստները վերանորոգուեցան որոշ դժուարութիւններէ ետք, ապահովելով 40Էն մինչեւ 60 առ հարիւր զեղչ: Այս աշակերտները իրենց բարձրագոյն ուսումը կը շարունակեն ստանալ

Intercollege, Cyprus College, Americanos College եւ Frederick Institute of Technology Կրթական հաստատութիւններէն ներս:

Աշակերտուհիի մը լրիւ կրթաթոշակ ապահովուեցաւ Philips College-էն ներս, շնորհիւ Տիկ. Վերա Թահմազեանի բարեխօսութեան:

Դարձեալ կը փափաքինք յիշեցնել, թէ շատ կարեւոր է կրթանպաստ ստացող աշակերտներուն բարձրագոյն նիշեր ձեռքբերելու անհրաժեշտութիւնը, որպեսզի կարողանանք ապահովել նպաստի շարունակականութիւնը:

Յանձնախումբեր

Երեսփոխանական Գրասենեակի Մշակութային Յանձնախումբի կորիզ մը, Յուլիս եւ Սեպտեմբեր ամիսներու ընթացքին, յաճախակի հանդիպումներով, գործի լծուեցան, տանելով նախապատրաստական աշխատանքներ «Արեւիկ» Մանկապատանեկան համոյթի ելոյթներուն առնչութեամբ:

Ծնորհակալական գիր

Պետական Ներկայացուցիչի պաշտօնին առաջին տարին բոլորած ըլլալուն առիթով, «Արձագանգ» ամսաթերթի Յուլիսի թիւին մեջ լոյս տեսած յօդուածին եւ ազնիւ խոսքերուն համար, Տիկ. Աստղիկ Դալիթեան, 23 Յուլիս թուակիր նամակով մը, արժանացաւ Պրն. Մահտեսանի շնորհակալական յատուկ գիրին, որպես ուժ եւ կարողութիւն ներշնչող անզուգական ուսուցչուիի:

Ծնորհաւորական գիրեր

Երեքաբթի, 17 Յուլիս 2007ին Պետական Ներկայացուցիչը շնորհաւորական գիրեր ուղղեց նորանշանակ նախարարներ՝ Պրն. Խրիստոս Փատսալիտիսին, Պրն.

Զոստաս Զատիսին, Տիկ. Երատո Զոզաքու Մարքուլիին եւ Տիկ. Մարիա Մալաքու Փամփալիին անոնց մաղթելով յաջողութիւն իրենց դժուարին առաքելութեան մէց:

Նշանակումներ

11 Յուլիս 2007ին, Տիկին Անահիտ Էսկիճեան, Պետական Ներկայացուցիչի կողմէ, նշանակուեցաւ Կիպրահայ համայսքի տարեցներու խորհուրդի երեսփոխան, իսկ Տիկ. Էլի Իւթիւճեան՝ փոխ-երեսփոխան:

17 Սեպտեմբեր 2007 թուակիր նամակով մը, Պրև. Վարդգես Մահտեսեան Կրթական Նախարարութեան առ ի վաւերացում առաջարկեց Պրև. Շաֆֆի Մահտեսեանի թեկնածութիւնը, որպես Նարեկ Հայկական Վարժարաններու Հոգաբարձական Մարմինի անդամ: Պրև. Շաֆֆի Մահտեսեան պիտի փոխարինէ կազմին վերջերս հրաժարած Պրև. Պարեթ Գույումնեանը:

Պետական-պաշտօնական մակարդակի հանդիպումներ

Երկուշաբթի, 9 Յուլիս 2007ին Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ միջազգային Pro Edvcatio կազմակերպութեան անդամներէն հնաբան Դոկտ. Ջրիստինա Մարանսիի հետ, որ աշխատանքային գործով կը գտնուեր Կիպրոս: Ան փափաք յայտնած էր տեսակցելու Պրև. Մահտեսեանի հետ, Մելգոնեան Կըրթական Հաստատութեան հարցին առնչութեամբ լուսաբանութիւններ ստանալու նպատակով:

Ուրբաթ, 13 Յուլիս 2007ին Պրև. Մահտեսեան Ներկայացուցաւ Լառնաքայի Զաղաքապետարանին կողմէ կազմակերպուած հանդիպում-ժողովին, քննելու եւ վերջնականացնելու համար Լառնաքայի ծովեզերքը գետեղուելիք Հայկական Ցեղասպանութեան Յուշահամա-

լիրին վերջին փուլի աշխատանքները: Այս Յուշահամալիրը լրիւ ֆինանսաւորուած է Կիպրոսի Կառավարութեան կողմէ, որ պիտի տրամադրէ մօտաւորապէս 117,000 Կիպրական Ոսկի:

Շաբաթ, 21 Յուլիս 2007ին Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Հ.Յ.Դ. Բիլորյի Ներկայացուցիչ Պրև. Սկրտիչ Սկրտիչեանին հետ:

Նոյն օրը, Կիպրահայ Միջկուսակցական Նախաձեռնող Յանձնախումբի պատուիրակութիւն մը տեսակցեցաւ Պետական Ներկայացուցիչին հետ:

Երեքաբթի, 4 Սեպտեմբեր 2007ին Պրև. Մահտեսեան ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Սլովաքիոյ նոր Նշանակուած Դեսպան Դոկտ. Անսա Թուրէնիքովայի հետ:

Նիւթական օժանդակութեան ապահովում

Յամահայկական 4-րդ Խաղերու Կիպրոսի Յանձնախումբի 17 Մայիս 2007 թուակիր նամակին ընդառաջելով, Պրև. Վարդգես Մահտեսեանի միջնորդութեամբ կարելի եղաւ 7,000 Կիպրական Ոսկի ապահովել Կիպրոսի Մարզական Կազմակերպութենեն (KOA) եւ 400 Կիպրական Ոսկի՝ Նիկոսիոյ Զարդարապետարանեն:

Ըստորիհի վերոյիշեալ Նիւթական ապահովութեան, կարելի եղաւ Յայաստանի մեջ Օգոստոս 18-25 կազմակերպուած Յամահայկական 4րդ Խաղերուն Ներկայացնել նաեւ Նիկոսիան:

Զեռնարկներու Ներկայութիւն

Չորեքաբթի, 4 Յուլիս 2007ին Պրև. Մահտեսեան Ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Ոստիկանութեան ակադեմիայի 2006-2007 տարեշրջանի շրջանաւարտներու հանդեսին:

Կիրակի, 16 Սեպտեմբեր 2007ի երեկոյեան Լառնացայի Ֆինիկուտեսի ծովեզերքը տեղի ունեցաւ 2րդ Միջերկրականեան Ազգագրական Պարի Փառատօնը, ուր իրենց մասնակցութիւնը բերին Համազգայինի «Օշական» մասնաճիւղի «Սիփան» պարախումբի պարմապարմանուիլիները։ Այս փառատօնին ներկայ գտնուեցան Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան, քաջալերելու մեր նորահաս սերունդին մասնակցութիւնը, որոնք վառ պահեցին մեր մշակոյթն ու աւանդական պարերը։

Ուրբաթ, 21 Սեպտեմբեր 2007ին, Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 16-րդ տարեդարձի ձեռնարկին, կազմակերպութեամբ Հ.Յ.Դ., Ս.Դ.Ռ.Կ. եւ Ռ.Ա.Կ. Կիպրոսի մարմիններուն, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Փասիտի սրահին մէջ։

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 16րդ տարեդարձի ընդունելութիւն

Չորեքշաբթի, 19 Սեպտեմբեր 2007ին, երեկոյեան ժամը 19.30-21.30ը, Մելգոնեան Կրթական Հաստատութեան շրջափակին մէջ մեծ ընդունելութեամբ նշուեցաւ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 16րդ տարեդարձը, միացեալ գործակցութեամբ Յունաստանի եւ Կիպրոսի արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Վահրամ Կաժոյեանին, Ազգային Առաջնորդարանին եւ Երեսփոխանական Գրասենեակին։ Ներկայ էին աւելի քան 300 Հայ թէ օտար իիլրեր, դեսպաններ, պետական անձնաւորութիւններ եւ Կիպրոսի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Պետ Արք. Խրիստոնոմոս Բ.Ռ. ինչպէս նաև Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց փոխ-նախարար Պրն. Արման Կիրակոսեան։





Ներկաներուն շնորհաւորութիւնները ընդունեցին Տէր Եւ Տիկին Վահրամ Կաժոյեան, Տէր Եւ Տիկին Վարդգես Մահտեսեան Եւ Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Վարուժան Արք. Յերկելեան:

Երեկոյի մթնոլորտը տարբեր փայլք ստացաւ շնորհիւ արուեստագետ ջութակահար Պրև. Ռոպերթ Յովհաննես-եանի զուտ հայկական երաժշտական կտորներու կատարողութեան:



Ծանօթանակը Կիպրոսի Հանրապետութեան ՕրԵնքներուն

Ծանօթանակը Բնակարանային Դիմումի ՕրԵնքներուն

Կիպրոսի Հողի Զարգացման Հիմնարկը հիմնուած է Կիպրոսի կառավարութեան կողմէ, լուծումներ հայթայթելու համար ցած կամ միջակ եկամուտ ունեցող ընտանիքներու:

Բնակարանային Ծրագիրներ

Հիմնարկը ուսի հետեւեալ Բնակարանային Ծրագիրները.

1. Յած Վարձատրութիւն ստացողներ
2. Լեռնային կամ հեռաւոր շրջաններու մէջ բնակողներ
3. Միջին Վարձատրութիւն ստացողներ

1. Յած Վարձատրութիւն ստացողներու բնակարանային ծրագիր

1.1 Եկամուտային Զափանիշներ.

Այս ծրագրէն կրնան օգտուիլ այն ընտանիքները կամ անհատները, որոնց տարեկան եկամուտը (հարկերէ առաջ) հետեւեալ սահմաններէն ներս է.

- Մենակեացներ՝ 7,000 կ.ո.
- Առողջական խնդիրներ ունեցող մենակեացներ՝ 10,500 կ.ո.

- Մինչեւ 3 զաւակ ունեցող ընտանիքներ՝ 14,000 կ.ո.
- 4-5 զաւակով ընտանիքներ՝ 15,000 կ.ո.
- 6 կամ ավելի զաւակով ընտանիքներ՝ 18,500 կ.ո.
- Անդամալոյժ կամ յատուկ կարիքներ ունեցող անդամով ընտանիքներ՝ 18,500 կ.ո.

1.2 Այլ Չափանիշներ

Դիմումներու թնակութեան ժամանակ նկատի կ'առնուին շարժական եւ անշարժ հարստութիւնը, ներկայ թնակութեան պայմանները, եւայլն:

Ընդհանուր սկզբունքով, կ'օգտուին այն ընտանիքներ կամ անհատները, որոնք իրենց եկամուտով կամ այլ հարստութեամբ չեն կրնար լուծել իրենց թնակարանային հարցերը:

1.5 Ֆինանսաւորման եւ Փոխատուութեան Պայմաններ Մինչեւ 7,500 կ.ո. Եկամուտով ընտանիքներ

Ֆինանսաւորումը կը ճշդուի ընտանիքի կամ անհատի նշանակած կարիքներուն համաձայն.-

- 1 Ննջասենեակ՝ 5,000 կ.ո. ֆինանսաւորում
- 2 Ննջասենեակ՝ 7,000 կ.ո. ֆինանսաւորում
- 3 Ննջասենեակ՝ 8,500 կ.ո. ֆինանսաւորում

Փոխատուութիւն

Կը պահանջուի թնակարանի գինի 6%ի կանխավճար: Մնացեալը, ֆինանսաւորման գումարի նուազեցումն ետք, կը վճարուի 25 տարուայ փոխատուութեամբ, որու տոկոսը շուրջ 3% (փոփոխական) է:

Փոխատուութիւնը կը կատարուի թնակութեան ֆինանսաւորման թիմարկին կողմէ: Փոխատուութիւնը պետք է ամբողջութեամբ վճարուած ըլլայ գնողին տարիքը 70ի հասնելէն առաջ:

7501-16000 կ.ո. Եկամուտով ընտանիքներ ֆինանսաւորում

- 1 ՆՆՉԱՍԵՆԵԱԿ՝ 4,500 կ.ո. ֆինանսաւորում
- 2 ՆՆՉԱՍԵՆԵԱԿ՝ 6,000 կ.ո. ֆինանսաւորում
- 3 ՆՆՉԱՍԵՆԵԱԿ՝ 7,500 կ.ո. ֆինանսաւորում

Փոխատուութիւն

Կը պահանջուի բնակարանի գինի 8%ի կանխավճար: Մնացեալը, ֆինանսաւորման գումարի նուազեցումն էտք, կը վճարուի 25 տարուայ փոխատուութեամբ, որու զեղչուած տոկոսը շուրջ 3% (փոփոխական) է:

1.4 Բազմանդամ կամ յատուկ կարիքներով ընտանիքներու յաւելեալ ֆինանսաւորում

Բազմանդամ ընտանիքներ կը ստանան յաւելեալ ֆինանսաւորում, ննչասենեակի կարիքներու համաձայն:-

- 4 զաւակով ընտանիքներ՝ +1,200 (4 ննչասենեակ)
- 5-6 զաւակով ընտանիքներ՝ +2,200 (5 ննչասենեակ)
- 6Ե աւելի զաւակով ընտանիքներ՝ +3,000 (6 ննչասենեակ)

Յատուկ կարիքներով անդամ ունեցող ընտանիքներ կրնան ստանալ մինչեւ 2,000 կ.ո. յաւելեալ ֆինանսաւորում, եթէ գնուելիք բնակարանին մէջ պէտք է կատարին յատուկ փոփոխութիւններ, ծառայելու կարիքաւոր անձի յատուկ պէտքերուն:

1.5 Այլ կանոններ

Այս ծրագրին կրնան մասնակցիլ այլ ընտանիքները, որոնք չեն օգտուած կառավարական բնակարանի կառուցման կամ շնորհման այլ ծրագիրներէ:

1.6 Բնակարաններու տրամադրելիութիւն

Ծրագրի առանձին տունները կամ բնակարանները կը կառուցուին Կիպրոսի Հողի Զարգացման Հիմնարկին կողմէ:

2. Լեռնային կամ հեռաւոր շրջաններ

Հիմնարկի առաջնահերթութիւններէն մէկն է քաջալերել գիւղաքնակութեան զարգացումը, պահպանելու համար գիւղերու գոյութիւնը:

Այս շրջաններուն մէջ, ուր Հիմնարկը չի կրնար պատրաստ բնակարանային լուծումներ հայթայթել, կամ դիմողները չեն կրնար այլ կառավարական ծրագիրներէ օգտուիլ, նախատեսուած է ֆինանսաւորում եւ գեղջուած տոկոսով փոխատութիւնը:

Փոխատութիւնը 22,000 կ.ո. է 2 նևշասենեակով բնակարանի կառուցման պարագային եւ 25,000 կ.ո.՝ 3 նևշասենեակի պարագային:

Բնակարանը պէտք է առաւելագոյնը 140 ք.մ. տարածութիւն ունենայ եւ կը կառուցուի ընտանիքին կողմէ: Ընտանիքը փոխատութեան կողքին կ'օգտուի նաեւ վերեւ յիշուած ծրագրին ընծայած ֆինանսաւորումէն:

3. Միջին Վարձատրութիւն ստացողներու ծրագիր

3.1 Եկամուտային չափանիշներ

Այս պարագային, որ ընտանիքներ կամ անհատներ չեն լրացներ թիւ 1 ծրագիրով նախատեսուած պայմանները, կրնան բնակարան գնել Հիմնարկին Միջին Վարձատրութիւն ստացողներու ծրագրին միջոցաւ: Սակայն, չեն ստանար ֆինանսաւորում:

Միջին Վարձատրութիւն ստացողներու ծրագրին կը ընան մասնակցիլ անոնք, որոնց տարեկան եկամուտը (հարկերէ առաջ) հետեւեալ սահմաններէն ցած է.

- Մենակեացներ՝ 12,000 կ.ո.
- Ամոլներ՝ 20,000 կ.ո.
- 1 գաւակով ընտանիքներ՝ 21,500 կ.ո.
- 2 գաւակով ընտանիքներ՝ 23,000 կ.ո.
- 3 գաւակով ընտանիքներ՝ 24,500 կ.ո.
- 4 գաւակով ընտանիքներ՝ 28,000 կ.ո.

3.2 Փոխատուութիւն

Կը պահանջուի բնակարանի գինի 25%ի կանխավը-ճար: Մնացեալը կը վճարուի մինչեւ 20 տարուայ փոխա-տուութեամբ:

Փոխատուութեան համար կը պահանջուի Բնակու-թեան Ֆինանսաւորման Հիմնարկին մօտ նախօրօք ու-սենալ պահեստի հաշիւ:

3.3 Այլ Զափանիշներ

Դիմումներու ըննութեան ժամանակ նկատի կ'առ-նուին շարժական եւ անշարժ հարստութիւնը, ներկայ բնակութեան պայմանները, եւայլն:

Ընդհանուր սկզբունքով, կ'օգտուին այն ընտանիքնե-րը կամ անհատները, որոնք իրենց եկամուտով կամ այլ հարստութեամբ չեն կրնար լուծել իրենց բնակարանա-յին հարցերը:

3.4 Բնակարաններու տրամադրելիութիւն

Ծրագրի առանձին տունները, բնակարանները, կամ բացառիկ պարագաներու՝ հողաշերտերը, կը կառուց-ւին կամ կը ճշդուին Կիպրոսի Յողի Զարգացման Հիմ-նարկին կողմէ:

Պատրաստուեցէ՛ք մօտալուս ձեռնարկներուն

**«Արեւիկ» Մանկապատանեկան համոյթի ելոյթ
Ճարբար, 6 Յոկտեմբեր 2007,
Երեկոյեան ժամը 8.00ին
Եւ**

**Կիրակի, 7 Յոկտեմբեր 2007,
Կ.Ե. ժամը 5.00ին,**

Սթրովոլոսի Քաղաքապետարանի սրահին մէջ:

**Կուրծքի քաղցկեղի կանխազգուշութիւն
(Breast Cancer Awareness)**

Կիրակի, 14 Յոկտեմբեր 2007,

Կ.Ե. ժամը 4.00-6.00ը, Hilton Park պանդոկին մէջ:

Տեղի պիտի ունենայ հիլասիրութիւն:

Սիրալիր հրաւեր բոլորին:

ԿԻՊՐՈՎԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42

Ել. Հասցե office@armenianmp.com

Ուստայնեց՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42

Ել. Հասցե vmahdessian@parliament.cy